NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

13 հունվարի 2017 թվականի N ՑԲ-002-01/17

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ 14,376,044 ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԲՈՐՍԱՅԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Ա) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2016 թվականի դեկտեմբերի 6-ի հայտը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 14,376,044 (տասնչորս միլիոն երեք հարյուր յոթանասունվեց հազար քառասունչորս) հատ սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակելու և Բորսայի բաժնետոմսերի հիմնական (Ա) ցուցակ ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2017 թվականի հունվարի 12-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 5-րդ գլխի դրույթներով, 9-րդ գլխի 50 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 14,376,044 (տասնչորս միլիոն երեք հարյուր յոթանասունվեց հազար քառասունչորս) հատ լրացուցիչ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակել և ընդգրկել Բորսայի բաժնետոմսերի հիմնական (Ա) ցուցակում՝ միաժամանակ թույլատրելով դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Սահմանել, որ Բորսայի բաժնետոմսերի հիմնական (Ա) ցուցակում համարվում են ցուցակված Ընկերության ընդհանուր քանակով 158,923,776 (մեկ հարյուր հիսունութ միլիոն ինը հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր յոթանասունվեց) հատ սովորական անվանական բաժնետոմսեր, որոնց շնորհված է դիտարկման ենթակա կարգավիճակ:
3. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 18-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • Երևան 0010, Միհեր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am